

Մ Ա Ն Օ Ն

(Պատկեր իրական կեանքից)

I

Երեկոյ էր: Ամառուայ այն հազուադիւտ երեկոններից մէկը, երբ X քաղաքի բնակիչները, ցերեկուայ սարսափելի տապից յետոյ, դուրս էին եկել մաքուր և զովարար օդ ծծելու:

Գլխաւոր փողոցի մայթերի վրայ վխտում էր երկսեռ ժողովուրդը:

Այդ ուրախ և անհոգ ամբոխի մէջ էր Մանօն, որ զգում էր, թէ որքան մենակ է ինքը, որքան անօգնական մնացած այս անծանօթ քաղաքի անազին բազմութեան մէջ:

Մարդիկ արագութեամբ անցնում էին նրա մօտով, մէկը շտապով անցնելիս հեռացնում էր նրան, միւսը թեքով հրելով ճանապարհ էր բաց անում իր համար, և Մանօն անտարբեր օրօրում, առաջ էր անցնում այդ տարուբերուող ալիքներում խաղալիք դարձած:

Երբեմն նրա նըքակազմ ուրուադիծը տեսնելով կամ նրա կուսական, պարզ հայեացքից զբաւուած, մարդիկ նրան խորհրդաւոր նշաններ էին անում կամ քայլերը մեղմացնելով դիտում էին նրան... Նա աղօտ կերպով հասկանում էր այդ բոլորը և նրա կուսական, անմեղ հոգին վրդովւում էր: Նա զգուանքով շուռ էր տալիս դէմքը և իր սպառնական հայեացքով հեռացնում սրիկաներին: Նա կանգ առաւ մի եւրոպական հայագործի խանութի առաջ: Թարմ և ախորժելի հացերի հոտը, որ այնքան դուրեկան է մանաւանդ քաղցած մարդուն, բուրում էր այնտեղից: Ելեկտրական պայծառ լուսաւորութեան տակ այս և այն կողմն էին վազվզում խանութի գործակատարները և պահանջող մարդկանց բաւարարութիւն տալիս: Այնտեղ, սեղանների շուրջը նստոտած մի քանի խումբ մարդիկ ինքնաբաւական կերպով զուարճանում էին, խմելով սուրճ և ուտելով շաքարահաց:

Մանօն կանգնել էր հիացած, այժմ նա չէր էլ նկատում իր մօտով անցկացողներին: Նրան, այդ բոլորին, ինչպէս մի քաղցած մարդու, հետաքրքրում էր համեղ և թարմ հացերը և նա լի նախանձով դիտում էր մարմարեայ սեղանի շուրջը բոլորածներին:

Այդ միջոցին ոչ մի ուրիշ գեղեցիկ բան չէր կարող նրան այնքան դրաւել, որքան հացագործների խանութները:

Այո, նա քաղցած էր, խիստ քաղցած...

Նրա ոտքերը հրաժարւում էին ծառայելու նրան, ոյժերը սպառուել էին, մի քանի բոլոր և գուցէ նա չը կարողանար կանգնել ու գլորուէր ամբողջի ռանների տակ: Եւ նա զգաց այդ թուլութիւնը ու յենուեց պատին:

Սրտամաշ և դառն մտածութիւններն մինը միւսի յետևից անցնում էին նրա յոգնած գլխից: Այո, նա մենակ էր, բառի բուն նշանակութեամբ. մենակ և քաղցած այս վիթխարի, անծանօթ քաղաքում:

Նա չուներ մէկը, որին կարող լինէր ասել իր ցաւ ու դարձը, որից կարող լինէր պաշտպանութիւն սպասել:

Ճիշտ է, Մանօն իր չարքաշ կեանքի տառնեւօթն տարիներում կրէ՛ք բաղդաւոր չէր եղել, կրէ՛ք անսիրտ բաղդը ժպտող դէմքով նրան չէր երեցել: Նա չէր տեսել հօր գուրգուրանքն և քնքոյշ մօրը անկեղծ փայփայանքներն:

Բայց նա ունէր եղբայր, որ փոխարինում էր թէ հօր և թէ մօր, նրա համար ողջ աշխարհն էր, նրա յոյսը և ապաւէնը: Միակ որը քոյրը ապրում էր իր միակ եղբօր հետ, նրա ջնջին ոռճիկով:

Այսպէս էր անցել նրա այս վերջի հինգ տարին: Բայց ահա մի օր, մի չարաբաստիկ օր, Մանօն մնաց կոյր բաղդի խաղալիք, մենակ, բոլորովին մենակ:

Մեռաւ նրա սիրասուն եղբայրն և աշխարհը Մանօի համար սև ու մութ դարձաւ:

Նոր զգալով իր անզօր և մենակ մնալն աշխարհում, նոր բաժանուած անմոռանալի եղբօր դիակից դեռ ողբում էր իր անփոխարինելի կորուստը և իր թշուառ ապագան, երբ նրա պառաւ տանտիրուհին կատաղած, ներս վազելով բռնեց նրա ծամիրից և քարշ տուեց դէպ փողոց:

«Կորիւր, անպիտան, իմ տնից, երկու ամիս է դեռ օչինչ չեմ ստացել ձեզանից: Անզգամ, եղբայրդ էլ մեռաւ, էլ ումից առնեմ իմ պահանջն»:

Այսպէս ասաց անսիրտ պառաւն և ուժգին սեղմելով Մանօի թեքից, դուրս շարտեց իր տնից:

Ո՞ւր գնար, ո՞ւմ դիմէր թշուառ աղջիկը:

Մանօն լուռ հեռացաւ իր պատասպարանից:

Նրա վիրաւոր, խոցուած սիրտը լցուեց դառնութեամբ, բայց չուներ մէկը, որին կարողանար բաց անել սիրտը, կարող լինէր նրանից գէթ մի մխիթարական խօսք լսել:

Նա կանգնած էր դեռ թիկն տուած պատին, նա իր հայեացքը կենտրոնացրել էր սալայատակի մի ինչ որ կէտի/վրայ և մտազբաղ նայում էր:

Իսկ մարդիկ անց ու դարձ էին անում նրա մօտից և շատերը հետաքրքիր և խորհրդաւոր հայեացքներ էին ձգում նրա վրայ: Ահա մէկը նրանցից, մի միջին տարիքով մարդ, իր լպիւրշ հայեացքը քողարկած, մօտեցաւ նրան:

Մանօն չը նկատեց, նա ձայն հանեց, մի ինչ որ բան ասաց:

Մանօն լուռ էր և անդրդուելի:

Մարդը համբերութիւնից դուրս եկած ձեռքով թափ տուեց նրա ուսից և հարցրեց, ինչո՞ւ ես այստեղ կանգնել:

Մանօն գունատուեց, նրա մաքրով իսկոյն անցաւ պառաւ տանտիրուհին, երբ դուրս չպրտեց տանից, և նա վեհերոտ ձայնով ասաց, — Ո՛հ, ես կերդամ, կերդամ, երեւի այստեղ էլ չի կարելի կանգնել, բայց ես ոյժ չունեմ, քաղցած եմ, ան, եթէ մի գործ լինէր, ես ուրախութեամբ միմիայն հացի համար կը ծառայէի:

Անծանօթ պարոնը մի խորհրդաւոր հայեացք ձգեց Մանօնին, այդ րոպէին մի չար խորհուրդ անցաւ նրա մտքով և նրա դէմքը փայլեց բուռականութիւնից, այդ չը նկատեց էլ Մանօն:

— Ես կը տամ քեզ գործ, ասաց պարոնը, եկ ինձ մօտ բօննա և հսկիր իմ երեխաներին:

Մանօն կարծես կերպարանափոխուեց, նա շնորհակալութեամբ լի մի հայեացք ուղղեց դէպի պարոնը և նրանք քիչ յետոյ արդէն գնում էին պարոնի տունը, որտեղ թշուառ Մանօն երազում էր սեփական աշխատութիւնով մի անկիւն ունենալ, որտեղ կարող կը լինէր իր բազմատանջ գլուխը վայր դնել:

Բայց նրա չար բաղդը իր հետն էր:

Այստեղ էլ չէր վիճակուած նրան հանգիստ լինել:

II

Մանօն սկզբի օրից սիրեց պարոնի երկու փոքրիկ տղաներին: Նա ամբողջ օրը տանում էր նրանց պարտէզը, խաղում

էր հետներն, զուարճայնում, զանազան նոր խաղեր էր հնարում Երկու փոքրիկներն էլ, ինչպէս յատուկ է բոլոր փոքրերին, շուտով մտերմացան նրա հետ և չէին ուզում բաժանուել:

Ուրիշ բան էր պարոնի վերաբերմունքը դէպի Մանօն: Նա քանի գնում այնքան խորհրդաւոր հայեացքներ էր ձգում, երբեմն անհասկանալի, երկդիմի խօսքեր էր ասում: Մանօն, մի ինչ որ վատ բան գուշակելով, ամեն անգամ խոյս էր տալիս նրա հայեացքներից և նրա հետ խօսելուց:

Անցնում էին օրեր, որքան Մանօն խոյս էր տալիս նրանից, այնքան աւելի պարօնը հետևում էր նրան: Լաւ էր երբ տիկինը տանն էր լինում, այդ ժամանակ պարոնի կրքերը մի քիչ սանձահարում էին:

Մի անգամ տիկինը, մի ինչ որ պատճառով, մի շաբաթով հեռացաւ քաղաքից: Մանօն էլի զբաղուած էր երեխաներով, նա նրանց քննանկուլուց յետոյ առանձնացաւ իր սենեակը:

Անցաւ մի ժամ, երկու ժամ, տանը տիրեց խորին լռութիւն: Բոլորը քնել հանգստացել էին: Գոնէ այդպէս էր երևում: Չէր քնել դեռ ևս Մանօն, նա տեղաշորերի մէջ անհանգիստ շուռ էր գալիս այս և այն կողմը: Եւ սա առաջի անգամը չէր որ Մանօն այսպէս էր:

Նա եղբոր գիակի հետ թաղել էր իր սրտի մի մասը, այնտեղ, նրա նուիրական գերեզմանում, նա թողել էր իր հոգու և ամբողջ էութեան մի մասը: Օտարներով չբնապատուած մօռանալ հարազատին հեշտ չէ:

Անցել էր մի քանի ամիս, և զբօր գերեզմանի վրայ, որտեղ շատ էր յաճախում Մանօն, արդէն բուսել էին թարմ ծաղիկներ, և Մանօի աչքերից այժմ հոսող արցունքները ցողում էին այդ ծաղիկները...

Այսօր էլ նա այնտեղ էր, այսօր էլ նա ցողել էր նուիրական գերեզմանի ծաղիկները և պոկել էր այնտեղից մի ծաղիկ, որը այժմ պինդ սեղմել էր կրծքին: Երբեմն համբուրում, երբեմն սեղմում էր, կարծես զգում էր որ իր թաղած՝ սրտի կտոր եղբորից կենդանութիւն առած ծաղիկն էր այդ...

Մինչ նա այս դառն մտածութիւնների մէջ էր ընկղմուած, լսուեց մի թեթև աղմուկ և մէկը սկսեց դուռը թակել:

Մանօն գունատուած, ահից կծկուեց և չէր կարողանում ձայն ծպտուն հանել:

«Բանց արա դուռը», լսուեց մի ձայն:

Մանօն ճանաչեց,—այդ պարոնի ձայնն էր: Երկիւղը թուլացրեց նրա ձեռներն ու ոտները և նա համարեա ուշաթափ վայր ընկաւ:

Ձայնը իսկ որ պարոնինն էր: Անցաւ մի քանի րոպէ: Նրա համբերութիւնը սպասելուց հատուեց և նա ուժգին մղեց դուռը, որի փոքրիկ փականքը, չը դիմանալով այդ հուժկու մղումին կոտրուեց և դուռը շառագմամբ բացուեցաւ:

Մանօն ցնցուեց և վեր թռաւ տեղից: Պարոնը շտապ քայլերով մօտենալով, սիրային խօսքեր էր ասում և ուզում գգուել, համբուրել: Բայց կատաղած Մանօն ուժգնապէս յետ մղեց նրան և պաշտպանողական դիրք բռնեց սենեակի մի անկիւնում:

Ի դուր էր պարոնը շոպյում սիրային խօսքեր, ի դուր էր նա թանգագին ակնեղէններ ցոյց տալիս, իր ամբողջ քսակն դնում Մանօի տրամադրութեան տակ: Մանօն անդրդուելի մնաց: Պարոնը այս անյաջողութիւններից աւելի զրգոռած, սկսեց բռնի միջոցների դիմել: Մանօն աշխատում էր փախչել, բայց ամեն անգամ էլ արգելւում էր հակառակորդի կողմից, իսկ սենեակը շատ հեռու էր փողոցից, այնպէս որ աղջկայ ձայնը ոչ մի տեղ չէր համնում:

Թշուառ աղջիկը ձեռքում պինդ բռնած էր այն ծաղիկը, սեղմում էր կրծքին, կարծես դա կարող պիտի լինէր պաշտպանել նրան:

Պարոնը քանի գնում, այնքան աւելի վստահ էր դառնում:

Նա արգէն բռնել էր Մանօի մէկ ձեռքից և աշխատում էր զրկել, սեղմել նրան իր կրծքին... Թշուառ աղջիկը, ուրիշ բան չը գտնելով, խլեց սեղանից ջրով լի բաժակը և ուժգնութեամբ խփեց նրա ձակաւին. բաժակը փչրուեց և մի քիչ ծուաւեց պարոնի ճակատը, մի քանի կաթիլ արիւն դուրս ցայտեց վէրքից: Բայց նա դարձեալ չը հրաժարուեց իր որսից և գրկելով նրան աշխատում էր վայր գլորել:

Սկսուեց մի կատաղի, անհաւատար կռիւ: Վերջապէս լսուեց մի կանաչի յուսահատ ձիչ և երկու իրար կպած ախօյեանները գլորուեցին գետին...

Մանօն ալլեւս ոչինչ չէր զգում—նա ուշաթափուել էր...

Հետեւեալ օրը Մանօն հեռացել էր այդ տնից:

III

Անցաւ աշունը, տնոցաւ և ձմեռը, եկաւ ցանկալի գարունը:

Գիշեր էր:

Այն մուսլ և ամպամած գիշերներից մէկը, երբ կարծես դայրացած երկինքը գգալ է տալիս մարդուն, որ տեսնում է

երկրի անարգարութիւնը: Գամին ուժգին խփում, շառաշում էր:

Այդ միջոցին մի խուլ փողոցի նկուղների մէկից դուրս եկաւ մի կին մի ինչ ուր բան փաթաթան ձեռքին: Նա վախվժխելով գնում էր, աշխատելով ոչ մէկին չը հանդիպել: Անցնելով ծուռ ու մուռ փողոցներով, վերջապէս նա կանգ առաւ մի հոյակապ տան առաջ, վերջին անգամ իր շրթունքները մօտեցրեց փաթաթանին, ձեռքով յետ արաւ շորը և համբուրեց: Դա նրա երեսան էր... Զգուշութեամբ վայր դնելով երեսային դռան չէմքում, յետ դարձաւ և սկսեց շտապ քայլերով գնալ: Նրա ոտքերը դողում էին, նա քայլերը դժուարութեամբ էր փոխում:

—Ա՛յ, ա՛յ, ա՛յ, ա՛յ, լսուեց երեսայի լացի ձայնը, որ սլաքի նման ծակեց մօր սիրտը, բայց նա պինդ փակելով ականջները շարունակեց իր դողդոջիւն քայլերը: Արտասուքը աղբիւրի նման հոսում էր նրա վշտահար երեսի վրայով:

Երկու անգամ էր վիճակուել նրան բաժանուել սիրելիներից, երկու անգամ էր որ կեանքը հարուածում էր թշուառին: Մէկի ժամանակ կորցրել էր նա իր միակ եղբորը, իսկ հիմա հարազատ երեսային...

Այդ կինը—Մանօն էր:

Անցաւ մի քանի ժամանակ: Ես դարձեալ մի անգամ տեսայ Մանօին փողոցում: Այժմ նա բալորովին այն չէր ինչ որ ստալ... Այժմ նա մարդկային ժխտում իրան խորթ չէր զգում: Զբաղել էր նրա դէմքի անմեղ ամաչկոտ արտայայտութիւնը: Կեանքի պետի մէջ էր թաթախուել նրա բիւրեղանման, մաքուր հոգին: Հացի խնդիրը ստիպում էր նրան այլիս խոյս չը տալ խորհրդաւոր, քննող հայեացքներից և հետամուտ եղողներից...

Ո՞վ էր մեղաւորը...

Մ. ՄԱՂԱՔԵԱՆ.